

5. ՆԱՄԱԿՆԵՐ ԵՒ ՆՈՐ ՑԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Վիեննայի Մխիթարեանց Դիւանին մէջ Գրիգոր Վ. Պասմաճեանի, Կ.Պոլսոյ Հայոց Պատրիարքին վրայ 1776—1790 գրուած տեղեկութիւններ եւ նոյնին ինքնագիր Նամակները կը գտնուին, որոնք պատմական կարեւորութիւն ունենալուն՝ ժամանակագրական կարգաւ յառաջ կը բերեմ.

1. 23 Փետր. 1776. «...Լըւաք, թէ Գրիգոր վարդապետն երբեմն Պատրիարք Կ. Պոլսի, եկեալ է ի վենետիկ, եւ մեղադիր լինի յոյժ վասն փախստեան Սամուէլ վարդապետին յարեւելս:», Եօթանեքին Հարք Մխիթարեանք որ ի Թրիեստ առ Մխիթարեան Հարս ի Կ.Պոլ., գրեալ ի Թր. 22 Փետր. 1776:

2. 22 Մայիս 1776. «...Լուաք, եթէ Հ. Ստեփան կարճիկն (ի վենետ) ընդ Գր. Պատրիարգին երթալոց է ի Հռոմ, զի Գր. Պատրիարգն ի Հռոմ ձեռնադրելոց է եպիսկոպոս եւ Ս. Ժողովն առատ եկամուտս հաստատեալ է նմա յամսեանն 30 սկուդ բաց ի ծախուց ճանապարհին:», Թուղթ Եօթանեցուն Հարց Թր. գրեալ առ Հ. Մխիթարեանս որ ի Պոլիս:

3. 24 Յնս. 1776. Թր. Հարք առ Հարս Պոլսոյ «...Հ. Ստեփանն Իզմիրցի եւս գնացեալ է ընդ Գրիգոր Պատրիարգին ի Հռոմ, զոր տեսեալ է Տէր Միքայէլն Մուրատեան յԱնքո-